ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 2621/1476

20.10.2014թվ.

ՀՀ Ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ
պարոն՝ Վ. Գասպարյանին

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲ
ՄՏԻՑ № 4215
22 10 2014 թ.

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի հոկտեմբեր ամսին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ արձանագրել է մի շարք թերություններ և խախտումներ:

Թերություններ՝

Սույն թվականի հուլիսի 14-ին թիվ 2621/1434 գրության առաջին և երկրորդ կետերով Դիտորդական խումբը տեղեկացրել էր, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ-ի երկրորդ հարկի սանհանգույցում բացակայում էր հիգիենիկ թուղթը և երկու հարկերի սանհանգույցի զուգարանակոնքի ջրահեռացման համակարգերը չէին գործում և ջրի անընդմեջ հոսք էր գրանցվել: Ի պատասխան 21.08.2014թ-ին թիվ 2/2-1-2003 գրությամբ ՀՀ ոստիկանությունից տրվել էր մեկնաբանություն, որ Դիտորդական խմբի կողմից ս/թ հուլիս ամսին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՁՊՎ այցելության ժամանակահատվածը համընկել է ՁՊՎ-ի հերթափոխի ընդունման և հանձնման ժամանակահատվածի հետ: Այդ ժամանակ տեխնիկական աշխատակիցների կողմից իրականացվել է սանմաքրման աշխատանքներ, ինչի համար ծորակները բացվել են ստուգումներ կատարելու և անսարքությունը վերացնելու համար, որից հետո սանհանգույցներում դրվել է հիգիենիկ թուղթ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՏԻՑ ԹԻՎ 8202
22 10 2014 թ.

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա
Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org
E-mail: info@policemonitoring.org

Կցանկանայինք Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Դիտորդական խումբը չի խոսել ջրի ծորակների մասին, այլ ներկայացրել է զուգարանակոնքերի ջրահեռացման համակարգի խնդիրը: Ավելին՝ 03.10.2014թ-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Երևանի ՀՊՎ այցելելուց կրկին Դիտորդական խումբը արձանագրել է, որ այս անգամ երկու հարկի զուգարաններում է բացակայում հիգիենիկ թուղթը և զուգարանակոնքերի ջրահեռացման համակարգերը վերանորոգված չեն, չեն գործում և ոչ մի աշխատանք չի տարվել տվյալ ուղղությամբ:

Խախտումներ՝

1. Սույն թվականի հուլիսի 14-ին թիվ 2621/1434 գրությամբ Դիտորդական խումբը փաստերի հիման վրա խնդրել էր ՀՀ ոստիկանությունից միջոցներ ձեռնարկել ՀՀ կառավարության 02.04.2009թ-ի թիվ 351-Ն որոշման 40 և 41 կետերի պահանջները պահպանելու ուղղությամբ: Ի պատասխան 21.08.2014թ-ի թիվ 2/2-12003 գրությամբ ՀՀ ոստիկանությունից տրվել էր մեկնաբանություն, որ քննչական գլխավոր վարչության կողմից ենթակա ստորաբաժանումներին հանձնարարական է տրվել քննչական գործողություններ կատարելու համար ձերբակալված և կալանավորված անձանց ուղեկցումը ապահովելու նպատակով առաջնորդվել ՀՀ կառավարության 02.04.2009թ-ի թիվ 351-Ն որոշման 40 և 41 կետերի պահանջներով, իսկ դատարանի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը չբավարարելու կամ կալանքից գրավով ազատելը թույլատրելի ճանաչելու դեպքում, քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից պարտադիր կերպով կայացնել անձին արգելանքից կամ կալանքից ազատելու վերաբերյալ ՀՀ քր. դատ. օր-ի 132 և 142 հոդվածներով նախատեսված որոշումներից որևէ մեկը՝ պահպանելով <<Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին>> ՀՀ օրենքի 42 հոդվածի պահանջները:

   Այս ամենից ելնելով հարկ ենք համարում տեղեկացնել, որ նշված գործառույթներից ոչ մեկը ամբողջությամբ չի պահպանվում: Ներկայացնում ենք փաստերը հաստատող հիմքեր:

- Գարեգին Զավենի Հակոբյանը բերման է ենթարկվել 17.09.2014թ-ին ժամը 11.40-ին: Ձերբակալվել է նույն օրը ժամը 14:10-ին, ՀՊՎ է ընդունվել ժամը 20:30-ին: Ազատ է արձակվել գրավով՝ 20.09.2014թ-ին ժամը 16:20-ին: Նշենք, որ նշված ժամանակահատվածում 3 անգամ նույնատիպ լրացված հայտերով Գ. Հակոբյանը տեղափոխվել է Կենտրոնի քննչական բաժին՝ քննչական գործողությանը մասնակցելու նպատակով: Վեջին երրորդ հայտը ներկայացվել է 20.09.2014թ-ին և այդ

ժամանակահատվածում անձը տեղափոխվել է դատարան՝ խափանման միջոց կիրառելու նպատակով և ներկայացված հայտի մեջ, դատարան տեղափոխելու վերաբերյալ գրառում չի եղել:

Արդյունքում՝ անձը քննչական գործողություններ կատարելու նպատակով դուրս է բերվել ՁՊՎ-ից, որպեսզի տեղափոխվի Կենտրոնի քննչական բաժին, բայց տեղափոխվել է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան խափանման միջոց կիրառելու: / *կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ-1,2,3*/

- Արգիշտի Գագիկի Գոմցյանը բերման է ենթարկվել 26.09.2014թ-ին ժամը 02:35-ին, ձերբակալվել է 26.09.2014թ-ին ժամը 04:20-ին, ՁՊՎ է ընդունվել 26.09.2014թ-ին ժամը 21:00-ին, ուշադրություն դարձրեք մոտ՝ 17 ժամ անց: Ա. Գոմցյանը մեկ անգամ՝ 27.09.2014թ-ին է տեղափոխվել Մաշտոցի քննչական բաժին և մեկ անգամ՝ 28.09.2014թ-ին՝ համապատասխան հայտերի հիման վրա: Քննիչի ներկայացրած հայտում նշված չէ, որ նա այդ ժամանակահատվածում պետք է տեղափոխվի դատարան՝ խափանման միջոց կիրառելու հարցը քննարկելու նպատակով, բայց տվյալ ձերբակալվածի վերաբերյալ 29.09.2014թ-ին ժամը 02:10-ին ստացվել է դատարանի կողմից գրավի կիրառման միջնորդությունը բավարարելու որոշումը և նրան գրավով ազատ արձակելու վերաբերյալ քննիչի որոշումը: / *կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ-4,5*/
- Արամ Վահրամի Սարդարյանը բերման է ենթարկվել 09.09.2014թ-ին ժամը 13:50-ին, ձերբակալվել է ժամը 16:30-ին և ՁՊՎ է ընդունվել ժամը 17:30-ին: Քննիչի կողմից ներկայացված 10.09.2014թ-ի հայտի հիման վրա 11.09.2014թ-ին Ա. Սարդարյանը տեղափոխվել է քննչական գործողության՝ ՔԳՎ ՀԿԳ քննության վարչություն, բայց նույն օրը ժամը 20:10-ին գործի քննությամբ զբաղվող քննիչի կողմից ներկայացվել է գրություն, որ Ա. Սարդարյանին ազատ արձակել, որովհետև դատարանի կողմից գրավի միջնորդությունը բավարարվել է և գրավի գումարը վճարված է: Տվյալ դեպքում էլ հայտը լրացված է թերություններով, անձը տեղափոխվել է քննչական գործողություններ կատարելու նպատակով, բայց տեղափոխվել է դատարան, խափանման միջոց է կիրառվել և առանց քննիչի որոշման անձը ազատ է արձակվել: Հիմք է ընդունվել ներկայացված գրությունը և գրավի անդորրագրի պատճեն: /*կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ-6,7*/

2. Գեղամ Սուրիկի Համբարձումյանը բերման է ենթարկվել 09.09.2014թ-ին ժամը 12:00-ին: Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ ձերբակալվել է 9 ժամ անց՝ 09.09.2014թ-ին ժամը 21:00-ին: ՁՊՎ է ընդունվել 10.09.2014թ-ին ժամը 01:45-ին: Ըստ <<ՁՊՎ-ում պահվող

անձանց հաշվառման>> գրանցամատյանի Գ. Համբարձումյանը ազատ է արձակվել 12.09.2014թ-ին ժամը 21:45-ին դատարանի կողմից գրավի միջնորդությունը բավարարելու որոշման հիման վրա: Սակայն ըստ դատարանի որոշման՝ Գ. Համբարձումյանի նկատմամբ քննիչի կողմից կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մերժվել է, որից հետո քննիչի կողմից որոշում է կայացվել Գ. Համբարձումյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել ստորագրություն չհեռանալու մասին: Ավելացնենք նաև, ինչպես մնացած բոլոր ձերբակալվածների դեպքում, այնպես էլ Գ. Համբարձումյանի դեպքում՝ 12.09.2014թ-ին, ըստ քննիչի հայտի ՁՊՎ-ից դուրս է բերվել քննչական գործողություններ կատարելու նպատակով, բայց տեղափոխվել է ընդհանուր իրավասության դատարան: / *կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկարներ-8,9,10,11/*

3. Նառա Գալուստի Առուստամյանը 03.09.2014թ-ին ՁՊՎ ընդունվելուց ունեցել է բազմաթիվ մարմնական վնասվածքներ: 03.09.2014թ-ին և 05.09.2014թ-ին Ն. Առուստամյանը քննչական գործողություններ կատարելու նպատակով դուրս է բերվել ՁՊՎ-ի տարածքից: Երկու քննչական գործողություններ կատարելուց հետո ՁՊՎ ընդունվելուց Ն.Առուստամյանի մոտ ըստ <<Ձերբակալված անձանց բուժզննության և բուժօգնության >> գրանցամատյանի արձանագրվել են նոր մարմնական վնասվածքներ:

   Դիտորդական խումբը կցանկանար տեղեկանալ, թե Ն.Առուստամյանը նախնական և հաջորդիվ ստացած մարմնական վնասվածքները ինչ պայմաններում է ստացել և ինչ միջոցներ է ձեռնարկվել դրանց ուղղությամբ: / *կից ներկայացվում է փաստը հաստատող լուսանկար-12/*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել փաստերը և տալ մեկնաբանություն ներկայացվածի վերաբերյալ:

Հարգանքով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ. Սահակյան

ՀՀ ք.Երևան 0002,Դեմիրճյան 29-1ա Հեռ./ֆաքս: (+374 10) 56 87 42
www.policemonitoring.org E-mail: info@policemonitoring.org